# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վազգեն Սարգսյան 25ա
Հեռ. (+374 47) 94 28 58, ֆաքս (+374 47) 97 42 14
Էլ. փոստ՝ info@artsakhhek.am
Ինտերնետային կայք՝ www. artsakhhek.am

Հաշվետվություն թիվ 3, 04.07.19թ

Սույնով տեղեկացնում ենք, որ 2019 թվականի հունիսի 30-ին կայացել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը :

Ստորև ներկայացվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները (նիստի արձանագրությունը կազմվել է 01.07.19թ-ին):

Վ. Բեգլարյան

(ստորագրություն)

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն

04.07.2019թ.

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«02» հուլիսի 2019 թ. N 1

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ե) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.06.2019թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 2-2019 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է՝

Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները:

Ժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«02» հուլիսի 2019 թ.

N 2

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժա) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի դ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.06.2019թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 2-2019 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է՝

Հաստատել «Фոր ԷՅ Քնսալթինգ» ՓԲԸ-ն որպես 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող ընկերություն:

Ժողովի նախագահ՝

Ա. Հարությունյան

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«02» հուլիսի 2019 թ. N 3

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի դ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.06.2019թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 2-2019 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է՝

Հաստատել զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝
1. Շահութաբաժիններ մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 11 % տարեկան եկամտաբերության հաշվարկով՝ ընդամենը 1 171 500 000 (մեկ միլիարդ հարյուր յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր հազար ) ՀՀ դրամ:
2. Մասհանումներ պահուստային հիմնադրամին՝ զուտ շահույթի 5%-ի չափով 84 802 000 (ութսունչորս միլիոն ութ հարյուր երկու հազար) ՀՀ դրամ:
3.Չբաշխված շահույթ 439 723 000 (չորս հարյուր երեսունինը միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ:

2018 թվականի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 110 (մեկ հարյուր տասը) ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2019թ. հուլիսի 15-ից:

Ժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«02» հուլիսի 2019 թ. N4

ք.Ստեփանակերտ

## «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը,«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.5 կետի ա) ենթակետը և և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.06.2019թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 2-2019 արձանագրությունը `«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է`

1. Ընկերության կանոնադրության 6.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 11 536 861 000 (տասնմեկ միլիարդ հինգ հարյուր երեսունվեց միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 11 536 861 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր վաթսունմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի, յուրաքանչյուրը 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 11 536 861 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր վաթսունմեկ) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են բաժնետերերին և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 3 563 139 (երեք միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար հարյուր երեսունինը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս` յուրաքանչյուրը 1 000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի` դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում:

2. Ընկերության գլխավոր տնօրենին հանձնարարել, Արցախի Հանրապետության պետական ռեգիստրի Ստեփանակերտի տարածքային բաժին ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը` նշված փոփոխությունն օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

Ժողովի նախագահ` Ա. Հարությունյան

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«02» հուլիսի 2019 թ.

N5

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ա) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.06.2019թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 2-2019 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է՝

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհուրդ ընտրել հետևյալ կազմով՝

1. Հարությունյան Արայիկ
2. Բալյոզյան Ռաֆֆի
3. Գրիգորյան Սարգիս
4. Բոյաջյան Հայկ
5. Ղոնյան Արա
6. Շեկոյան Վլադիմիր
7. Մկրտչյան Մենուա

Ժողովի նախագահ՝

Ա. Հարությունյան